ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2023 թվականի №--Ա

## «ՎՈԼՏԱ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ունեցող անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև լիցենզիա ունեցող անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում լիցենզիա ունեցող անձը պարտավոր է նախապես ստանալ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համաձայնությունը,

բ) «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առանց նույն հոդվածում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առ ոչինչ է,

գ) Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի №241-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տրվել «ՎՈԼՏԱ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալը կազմող՝ Վարդան Վահագնի Հովսեփյանին պատկանող 20 տոկոս և Սևակ Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասերն «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությանն օտարման գործարքի կնքմանը,

դ) Ընկերությունը Որոշման մասին իրազեկվել է 2023 թվականի հուլիսի 21-ին, և Որոշումը, դրա 5-րդ կետի համաձայն, ուժի մեջ է մտել 2023 թվականի հուլիսի 22-ից,

ե) Ընկերությունը 2023 թվականի հուլիսի 27-ին, ի կատարումն Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի, Հանձնաժողով է ներկայացրել Ընկերության կանոնադրական

կապիտալը կազմող՝ վերը նշված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որը կնքվել է 2023 թվականի հուլիսի 19-ին: Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ այն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից,

զ) Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 31-ի №ԳԲ/34.1-Մ4-1/2686-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն)՝ խնդրելով պայմանագրերի՝ գործող իրավակարգավորումներին համապատասխան կնքված լինելու փաստի գնահատման նպատակով հայտնել, թե արդյոք բաժնեմասի օտարման դեպքում ձեռքբերված իրավունքները ենթակա են պարտադիր գրանցման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից, թե ոչ, և ըստ այդմ՝ «ՎՈԼՏԱ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Վարդան Վահագնի Հովսեփյանին պատկանող 20 տոկոս և Սևակ Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասերի՝ «ԷԿՈՎԻԼ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությանը օտարման գործարքն արդյոք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 449-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով կնքված է համարվում Գործակալության կողմից դրա գրանցման պահից, այսինքն՝ 2023 թվականի հուլիսի 26-ից, թե դրա ստորագրման պահից՝ 2023 թվականի հուլիսի 19-ից,

է) Գործակալությունը 2023 թվականի օգոստոսի 8-ի №/25.9/36176-2023 գրությամբ հայտնել է, որ Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն, քանի որ դրանք վերաբերում են այն իրավահարաբերություններին, որոնցում գործարքից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունը, սակայն, չի ենթադրում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում: Գրությամբ նշվել է նաև, որ չնայած պայմանագրի կնքման պահից այն առաջացնում է կողմերի համար իրավունքներ և պարտականություններ, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ պետությունը ճանաչում է բաժնեմասի սեփականատիրոջը՝ որպես համապատասխան ընկերության մասնակից, միայն փոփոխության պետական գրանցման պահից կարելի է արձանագրել բաժնեմասի սեփականատիրոջ՝ ընկերության մասնակից լինելու հանգամանքը, որը սակայն, չի կարող հանգեցնել գործարքի կնքման փաստացի ժամկետի փոփոխության, եթե համապատասխան պայմանագրով դրա ուժի

մեջ մտնելու հատուկ կարգավորումներ սահմանված չեն: Նշվածով պայմանավորված, սակայն, եթե բաժնեմասերի օտարման պայմանագրով սահմանվի, որ պայմանագիրը կողմերի համար իրավական հետևանքներ է առաջացնում փոփոխության պետական գրանցման պահից, ապա կիրառելի է պայմանագրի նշյալ դրույթը,

ը) Հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 15-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 15-ի № ԳԲ/34.1-Մ4-1/2971-2023 գրությամբ,

թ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2023 թվականի օգոստոսի 24-ի գրությամբ, հղում կատարելով մի շարք իրավանորմերի և ներկայացնելով կոնկրետ իրավիճակի հետ կապ չունեցող օրինակներ, պնդել է, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջի խախտում առկա չէ և իր գնահատմամբ Պայմանագիրը կնքված է համարվում՝ Ընկերության կանոնադրության փոփոխության (նոր խմբագրությամբ) պետական գրանցման պահից, այն է՝ 2023 թվականի հուլիսի 26-ից, եթե ոչ, ապա՝ Պայմանագրի էական պայմանների վերաբերյալ համաձայնության ձեռքբերման պահից (այն է՝ 2023 թվականի հուլիսի 22-ից), որը Ընկերությունը համարել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահը: Ընկերությունը միաժամանակ պնդել է, որ Որոշման մասին իր իրազեկման պահ է համարվում 2023 թվականի հուլիսի 19-ը, երբ կայացած Հանձնաժողովի նիստում ընդունվել է Որոշումը՝ այդ նիստին Ընկերության ներկայացուցիչների մասնակցության ուժով,

ժ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ գործարքը կնքել է առանց Հանձնաժողովի համապատասխան համաձայնության առկայության, ուստի՝ կնքված գործարքը «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով կնքման պահից մինչև Որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է: Մասնավորապես, Որոշումն ուժի մեջ է մտել 2023 թվականի հուլիսի 22-ից, հետևաբար՝ գործող կարգավորումների ուժով Որոշմամբ Հանձնաժողովի տրամադրած համաձայնությունն իրավական ուժ է ստացել նույն օրվանից: Ինչպես արդեն նշվել է, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ունեցող անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև լիցենզիա ունեցող անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ

քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում լիցենզիա ունեցող անձը պարտավոր է նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը: Գործարքի կնքման պահի որոշման հարցի առնչությամբ հարկ է մեջբերել, որ Օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով: Միաժամանակ, Օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177), իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

Տվյալ դեպքում վերոնշյալ կարգավորումների և կնքված գործարքի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Պայմանագիրը չի ենթադրում որևէ գույքի հանձնում, հետևաբար կիրառելի չէ Օրենսգրքի 449-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումը: Տվյալ պայմանագրի մասով առկա չէ նաև Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, քննարկվող հարցի մասով իրավասու մարմինը՝ Գործակալությունը, առավել քան հստակ փաստել է, որ տվյալ պարագայում Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը կիրառելի չէ, քանի որ դրույթը վերաբերում է այն իրավահարաբերություններին, որոնցում գործարքից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունը չի ենթադրում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում, այլ ընդամենը գրառված տեղեկության փոփոխության պետական գրանցում է: Ընդ որում, իրավասու մարմինը նաև նշել է, որ կարևոր է ուշադրություն հրավիրել բաժնեմասերի օտարման պայմանագրերով սահմանված դրույթներին, մասնավորապես՝ եթե օրինակ առկա լինի դրույթ առ այն, որ պայմանագիրը կողմերի համար իրավական հետևանքներ է առաջացնում փոփոխության պետական գրանցման պահից, կիրառելի է պայմանագրի նշյալ դրույթը: Ուստի, տվյալ դեպքում ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով, որ Պայմանագրի 7-րդ կետով կողմերը հստակ սահմանել են, որ այն ուժի մեջ

է մտնում ստորագրման պահից, և տվյալ դեպքում ստորագրման պահ է հանդիսանում 2023 թվականի հուլիսի 19-ը, հետևաբար՝ գործարքի կնքման պահը՝ Պայմանագրի ստորագրման ուժով (որով և հաստատվում է կողմերի միջև Պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու փաստը) ևս 2023 թվականի հուլիսի 19-ն է:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված փաստարկներին՝ հարկ է նշել, որ դրանք, ըստ էության, տեսական դատողություններ են և ոչ միայն չունեն իրավական հիմնավորում, այլ նաև հակասում են գործող իրավակարգավորումներին ու դրանց առնչությամբ իրավասու մարմնի կողմից տրված պարզաբանումներին: Մասնավորապես, Պայմանագրի կնքման պահը կանոնադրության մեջ կատարված փոփոխության (նոր խմբագրությամբ) պետական գրանցման պահով պայմանավորելու պնդումն անհիմն է վերոնշյալի և Գործակալության մեկնաբանությունների ուժով:

Պայմանագրի էական պայմանների վերաբերյալ համաձայնության ձեռքբերման պահը Որոշման ուժի մեջ մտնելու (2023 թվականի հուլիսի 22-ը) օրը համարելու վերաբերյալ Ընկերության մեկնաբանության մասով հարկ է նշել, որ Օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի: Նշված նորմի և հոդվածի բովանդակությունից ակնհայտ է, որ գործարքի էական պայմանները նորմատիվ կարգավորման ուժով կամ պայմանագրային կողմի առաջարկությամբ գործարքում ներառվող պարտադիր պայմաններն են, որոնց շուրջ կողմերն են ձեռք բերում համաձայնություն ու կնքում գործարք: Հակառակ դեպքում՝ գործարքը չի համարվի կնքված (նույն օրենսգրքի 448-րդ հոդված): Քննարկվող հարցի համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ Հանձնաժողովը ոչ թե գործարքի կողմ է (քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակից), այլ՝ վարչաիրավական հարաբերությունների շրջանակում գործարքի կնքմանը համաձայնություն տվող վարչական մարմին: Այսինքն, Հանձնաժողովի կողմից գործարքի կնքմանը տրվող համաձայնությունը որևէ կերպ չի կարող համապատասխանել պայմանագրի էական պայմանի հատկանիշներին, նման մեկնաբանությունը հակասում է Օրենսգրքին, ուստի՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումը Պայմանագրի էական պայման դիտարկելու և Պայմանագրի կնքման պահը Որոշման ուժի մեջ մտնելու պահով պայմանավորելու հիմքեր առկա չեն:

Անհասկանալի են Ընկերության դիտարկումները Պայմանագրի միայն 7-րդ կետի առ ոչինչ ճանաչելու առնչությամբ: Մասնավորապես, Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առ ոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ: Ինչպես նշված իրավակարգավորումից, այնպես էլ օրենսգրքի մյուս նորմերի մեկնաբանություններից ակնհայտ է, որ գործարքի առ ոչինչ լինելու դեպքը պարտադիր պետք է սահմանված լինի օրենքով: Տվյալ պարագայում որևէ օրենքով սահմանված չէ Պայմանագրի հենց 7-րդ կետով նախատեսված պայմանի առ ոչինչ լինելու մասին դրույթ, իսկ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորումը վերաբերում է ողջ գործարքի առոչնչությանը: Անգամ Պայմանագրի 7-րդ կետի՝ ի սկզբանե Պայմանագրում ներառված չլինելը որևէ կերպ վերոնշյալ հիմնավորումների ուժով չէր կարող փոխել Պայմանագրի կնքման պահը, այն է՝ 2023 թվականի հուլիսի 19-ը, նաև այն պարզ պատճառով, որ Պայմանագրում այդ կետի բացակայության կամ դրա ենթադրյալ առ ոչինչ լինելու ուժով Պայմանագրում չի կարող ինքնաբերաբար ավելանալ դրույթ և կողմերի կամահայտնություն առ այն, որ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան գրանցման կամ էլ Որոշման ուժի մեջ մտնելու պահից, ինչը կարող էր էապես փոխել առկա իրավիճակը:

Անդրադառնալով Ընկերության մասնակիցների՝ Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի նիստին ներկա գտնվելու արդյունքում Որոշման ընդունման մասին տեղեկանալը դրա մասին իրազեկում համարելուն, հարկ է փաստել, որ վարչական ակտի մասին հասցեատիրոջը իրազեկման և դրա ուժի մեջ մտնելու վերաբերյալ ժամկետները հստակ սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքներով: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի շրջանակում կայացված՝ Հանձնաժողովի անհատական բնույթ կրող գրավոր որոշումներն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում են վարույթի մասնակիցներին: Հանձնաժողովի որոշումները, գրությունները և այլ փաստաթղթեր հանձնելու (ուղարկելու) կարգը սահմանված է նույն օրենքի 24-րդ

հոդվածով, որում նիստին ներկա գտնվելը որպես Հանձնաժողովի որոշման մասին իրազեկման ձև նախատեսված չէ, ինչը, իհարկե, ինքնանպատակ չէ, քանզի նիստի ընթացքում անձին պատշաճ ձևով կազմված և ստորագրված որոշում չի հանձնվում: Ավելին, եթե նույնիսկ առաջնորդվենք Ընկերության տրամաբանությամբ, և Ընկերության մասնակիցների՝ Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի նիստին ներկա գտնվելու արդյունքում Որոշման մասին տեղեկանալը համարենք իրազեկում, ապա գործող իրավակարգավորումների (ինչն իր արտացոլումն է ստացել նաև Որոշման 5-րդ կետում) համաձայն՝ Որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, տվյալ տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում՝ 2023 թվականի հուլիսի 19-ին հաջորդող օրվանից, այն է՝ նույն թվականի հուլիսի 20-ից, մինչդեռ Պայմանագիրը ստորագրվել է 2023 թվականի հուլիսի 19-ին, այնուամենայնիվ՝ նախքան Որոշման «ուժի մեջ» մտնելը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Ընդունել ի գիտություն, որ 2023 թվականի հուլիսի 19-ին կնքված՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող Վարդան Վահագնի Հովսեփյանին պատկանող 20 տոկոս և Սևակ Ռոբերտի Օխանյանին պատկանող 80 տոկոս բաժնեմասերի օտարման գործարքը կնքման պահից մինչև Որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--- նոյեմբերի 2023թ.